Austrian
Development
Cooperation

ՀՀ ՊԵԿ նախագահ
պրն. Էդուարդ Հակոբյանին

15.04.2025

Հարգելի՛ պարոն Հակոբյան,

Սույնով հավաստում ենք, որ «Երևանի պետական համալսարան»-ի կողմից իրականացվում է Project373: **«Հայաստանում անտառապատ տարածքներում միկորիզային և քսիլոտրոֆիկ սնկերի կենսաբազմազանության գնահատում և ԴՆԹ-բարկոդավորում»** APPEAR ծրագիրը ("Project373: Biodiversity Assessment and DNA Barcoding of Mycorrhizal and Xylotrophic Fungi in Forested Regions of Armenia" APPEAR project.), որը ֆինանսավորվում է Ավստրիական զարգացման գործակալության կողմից՝ ՀՀ Կառավարության և Ավստրիայի Հանրապետության Կառավարության միջև զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագրի շրջանակներում: Համաձայն 26/06/2012 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ավստրիայի Հանրապետության Կառավարության միջև զարգացմանն ուղղված համագործակցության մասին» համաձայնագրի 5-րդ հոդվածի, հայկական կողմը՝

ա) ազատում է հարկերից, մաքսերից, տուրքերից և այլ գանձումներից բոլոր ապրանքները, ներառյալ սարքավորումները և նյութերը, աշխատանքները և ծառայությունները, որոնք տրամադրվել կամ ֆինանսավորվել են Ավստրիայի կողմից դրամաշնորհային հիմունքներով:

Հետևաբար, ծրագրի իրականացնող՝ «Երևանի պետական համալսարան»-ն ազատվում է վերոնշյալ ծրագրի իրականացման ընթացքում առաջացող բոլոր տեսակի հարկերից և տուրքերից:

Ծրագրի իրականացման ժամկետը 2025 թ. մարտի 1-ից մինչև 2027 թ. փետրվարի 28-ն է:

Հարգանքով՝

Նորա Ալանակյան

Գրասենյակի ղեկավարի տեղակալ

Coordination Office for Technical Cooperation of the
Austrian Embassy, Yerevan
V. Sargsyan 26/1 • 0001 Yerevan • Armenia
phone: +374 (0) 60 654 654 • jerewan@ada.gv.at • www.entwicklung.at